



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ
ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**

**WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ՖՐԵՉՆՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ
ՀՈՎԻԸ, ԵՐԵՍՓՈՆԱՆՆԵՐ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ**

Երեքշաբթի, 22 Ապրիլի կեսօրին, Ազգային Առաջնորդարան այցելեցին Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Վահան Զիւլ. Կոստանեան, երեսփոխաններ եւ հոգաբարձութեան ներկայացուցիչներ՝ Տիար Տէյվիտ Սրապեան (ատենապետ), Ֆիլիպ Փառնակեան (փոխ ատենապետ), Լեւոն Պալաճանեան (գանձապահ) եւ Տիկին Մէյրի Ալիս Գալուստեան, աշխատանքի հանդիպում մը ունենալու համար Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Ազգ. Վարչութեան անդամներու հետ:

Հանդիպումին մասնակցեցան Կրօնական Ժողովի ատենապետ Գերայ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան եւ անդամ Տիար Վարուժան Տէր Սիմոնեան: Զննարկուեցան Ֆրեզնոյի ծխական շրջանի ծրագիրներն ու կարիքները, յատկապէս քրիստոնէական դաստիարակութեան կալուածին մէջ: Նկատի ունենալով, որ Մայիսի սկիզբը տեղի պիտի ունենայ Թեմիս Ազգային Երեսփոխանական Ժողովի նստաշրջանը, խորհրդակցութիւնները ընդգրկեցին նաեւ այդ ժողովին հետ աղերս ունեցող հարցեր:

Հանդիպումէն ետք, Առաջնորդ Սրբազանը ներկաները հիւրասիրեց ճաշով:

**HOLY TRINITY CHURCH PASTOR, DELEGATES,
AND BOARD OF TRUSTEES VISIT THE PRELACY**

On Tuesday, April 22nd, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Rev. Fr. Vahan Gosdanian, Pastor of Holy Trinity Church in Fresno, Delegates, and Board of Trustees members to the Prelacy. Among the delegation were Board of Trustees Chairman Mr. David Sarabian, Vice-Chairman Mr. Philip Parnagian, Treasurer Mr. Levon Baladjanian, and Advisor Ms. Mary Alice Kaloostian.

Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian participated in the meeting, as did Executive Council Chairman Dr. Garo Agopian and member Mr.

Varoujan Der Simonian. Among the items on the agenda was the evaluation of the parish's activities, specifically with regards to Christian Education, and issues relating to the upcoming Representatives Assembly which will be held in May.

The meeting concluded with lunch hosted by the Prelate.